Զանթայի բնակչաց կարծիքն է որ երկրաշարժի ատեն ձիւթը աւելի առատ կ՚ըլլայ . կրնայ ըլլալ որ նոյն ցնցմամբ ձիւթը իր հանքէն բաժնուի ու վեր ելլէ ։ Այս աղբիւրներուն մօտերը աւելի քիչ բնակիչ կայ քան թէ կղզւոյն ուրիշ կողմերը ։

Զանթայի պէս գրեթէ երկիր մը չկայ ուր շարունակ երկրաշարժութիւն ըլլայ . շատ անգամ մէկ ամսուան մէջ մօտ երկու իրեք շարժ կ՚ըլլայ . և 1811ին գարնան երեսուն քառասուն օրուան մէջ անդադար զանազան շարժեր եղան, և տներուն ու բերդին ճեղքուածներուն նայելով՝ ըսել է թէ բաւական սաստիկ են եղեր ։ Սովորաբար այս շարժերը կղզւոյն ամէն դին չեն իմացուիր, միայն քիչ մը միջոց տեղ . և շատ անգամ այս շարժերը վեր 'ի վերոյ ցնցմունք մըն են ։ Իսկ բնակիչքը ապահով են . վասն զի օդէն կ՚իմանան որ շարժ պիտի ըլլայ , ինչու որ շարժ ըլլալէն առաջ դժուարաշնչութիւն մը կը զգան , որ ըսել է թէ մթնոլորտը ծծմբով լեցուեր է . և շատ անգամ շարժէն ետև անձրև կուգայ ։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԵՍՏ

Հերձաքար ։

ՀԵՐՁԱՔԱՐԸ [1] տեսակ մը դիւրահերձ ու թեթև քար է , որ թերթ թերթ կը բաժնուի ու զանազան գունով կ՚ըլլայ , մութ , գորշ կամ կապոյտ , և քիչ անգամ կանաչ կամ կարմիր ։ Գետնէն նոր հանուած ատենը կակուղ կ՚ըլլայ , բայց օդ տեսնելով այնչափ կը կարծրանայ որ դիւրաւ բարակ թերթեր կը բաժնեն ու տեղ տեղ դպրոցներու մէջ կը գործածեն վրան գիր փորձելու համար . ուրիշ տեղուանք ալ տներուն երդիքը այս թերթերով կը ծածկեն ։ Երկրաբանք իրեք տեսակ հերձաքար կը զանազանեն . ա . ՆԱԽՆԱԿԱՆ ՀԵՐՁԱՔԱՐ , որ կաւախառն կ՚ըլլայ . բ . ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՀԵՐՁԱՔԱՐ , որուն բաղադրութիւնն է գայլախազ , պաղլեղ , մակնեսիա , կիր , երկաթ . գ . ԱՂՐԱԽԱՌՆ ՀԵՐՁԱՔԱՐ , որ հանքային ածուխի խաւերուն մէջ կը գտնուի ։

Հերձաքարի գործածութիւնը հիները չէին գիտեր , և Պլինիոսի գրուածոցը մէջ ամենևին ասոր վրայ յիշատակութիւն չկայ , բայց հիմայ շատ կը գործածուի , մանաւանդ տներու երդիքը ծածկելու համար ։ Շատ տարի չկայ որ Ալֆրետ Փէյը անունով մէկը Բարլըքըրուն քաղաքը տեսակ մը արուեստական հերձաքար հնարեց , և զանազան փորձերով տեսնուեցաւ , ա . որ չորս ամիս միակերպ պաղ ջրի մէջ ձգուելով ամենևին փոփոխութիւն մը չկրեց . բ . որ սաստիկ կրակի վրայ դրուելով 15 վայրկեանէն ետև հազիւ թէ ձևը կորսընցուց , և սև ու խիստ թիթեղ մը դարձաւ ։ Աստի աս բանիս վստահութիւն առնելով՝ Բարլըքըրուն քաղաքը փայտէ տուն մը շինեցին ու չորս դին ալ ներսէն այս հերձաքարով պատեցին . ետքը տունը այրելու նիւթերով լեցուցին ու կրակ տուին , տեսան որ բոլոր տանը մէջ եղածներն այրեցան ու տունը անվնաս մնաց ։ Նոյն փորձը Պէռլին փորձեցին ու նոյնպէս գտան ։ Շատ աղէկ կ՚ըլլայ թէ որ տան մը երդիքը այս արուեստական հերձաքարով գոցուելու ըլլայ , որ թէ՛ բնական հերձաքարէն թեթև է , և թէ անոր պէս անձրևէ անթափանցելի է , ու թէ կրակի կը դիմանայ . բայց ասոր թերթերը երդիքին վրայ պղնձէ գամերով հաստատելու է ու ծակտիքը տեսակ մը ծեփով ծեփելու , որուն բաղադրութիւնն է վուշի եղ , սպիտակաղեղ ու բրուտի կաւ ։

Աս արուեստական հերձաքարին բաղադրութեան նիւթերն են , ա . Ճերմակ , կարմիր հայկաւակ . բ . բրուտի կաւ կամ կրի ածխուտ . գ . աղէկ սոսինձ . դ . զանգուած թուղթ . ե . կտաւատի եղ ։

1 Ardesia.

Հայկաւակը կամ Հայկաւը ու բրտի կաւը զատ զատ անկանի [1] մէջ ծեծելու ու փոշի դարձընելու է ու բարակ մաղէ անցընելու է։

Սոսինձը սովորական կերպով՝ ջրով լուծելու է։

Թղթէ խմորը պէտք է ծծուն թղթէ ըլլայ, և նախ ջրի մէջ աղէկ մը թրջելէն ետև դորձիքի մը տակ դրած ճղմելով մէջի ջուրը քամելու է։ Այլ աս թղթիս տեղ կրնայ գործածուիլ ճերմակ թղթի կտորուանք ու դրքերու կողք որ աւելի աղէկ է. 24 ժամ եփելէն ետև մամուլի տակ ճղմելով ջուրը քամելու է։ Լակ կտաւատի եղը հում պիտի ըլլայ։

Թղթին զանգուածը հալած սոսինձով անկանի մը մէջ աղէկ մը խառնելու է, ետքը հայկաւակն ու բրտի կաւը ասոնց հետ մէկտեղ խառնած աղէկ մը զանգելու է. այս զանգուածը տափանով [2] լաւ մը ծեծելէն ետև վրան կտաւատի եղ անցընելու է։ Երջը աս խառնուրդէն կտոր մը առնելու ու ծեփիչով տախտակի մը վրայ տարածելու է, որուն չորս դին շրջանակ մը անցուցած ըլլայ, և զանգուածը դեռ տախտակին վրայ չտարածած՝ պէտք է տախտակին երեսը հասարակ թղթով ամբողջ ծածկել. տարածելէն ետև ուրիշ թերթ մը թղթով ալ երեսը գոցելու է ու վրան տախտակ մը դրած տակը վրան դարձընելու է և շրջանակաւոր տախտակն ու առջի դրած թերթ մը թուղթը դուրս հանելու է։ Այս գործողութենէս ետև նորէն դարձընելու է հերձաքարը ու բարակ աւաղի վրայ տարածելու է, և երկրորդ տախտակն ու թուղթը մէկդի առած ձգելու է որ երթայ ինքն իրեն չորնայ։

Այս տեսակ ԲՂԲԷ դարը երբոր կը չորնայ՝ ոչ կը պատռի և ոչ կը ճղքուի, բայց կրնայ ծռիլ, և քիչ անգամ ողորկ կ'ըլլայ. անոր համար պէտք է թիլթեղահան գործիքին գլաններուն տակէն անցընել, որով թէ կ'ողորկուի և թէ կը պնդանայ. ետքն ալ մամուլի մը տակ դրած աղէկ մը սղմելու է որ շտկուի, ու հանելէն ետքը երկու երեսն ալ կը տաւատի եփած եղով օծելու է. աս եղին մէջ քիչ մը քարմարցանկ [1] (կապարի ոքսիտ) պէտք է խառնել որ շուտ չորցընող է։

Հիմայ դնենք հոս այս բաղադրութեան քանի մը կերպը։

Ա. Մէկ մաս հին թղթի կտորներէ ու գրքի կտորներէ զանգուածով, կէս մաս սոսինձով, մէկ մաս բրտի կաւով, երկու մաս հայկաւակով և մէկ մաս կտաւատի եղով՝ բարակ, պինդ ու ողորկ հերձաքար կը շինուի։

Բ. Մէկ ու կէս մաս թղթի զանգուածով, մէկ մաս սոսինձով, մէկ մաս ճերմակ հայկաւակով՝ գեղեցիկ, ամուր ու պինդ հերձաքար կը շինուի։

Գ. Մէկ ու կէս մաս թղթի զանգուածով, երկու մաս սոսինձով, երկու մաս ճերմակ հայկաւակով և երկու մաս բրտի կաւով այնպիսի հերձաքար կը շինուի որ փղոսկրի պէս ամուր ու պինդ կ'ըլլայ։

Դ. Մէկ մաս թղթի զանգուածով, մէկ մաս սոսինձով, իրեք մաս ճերմակ հայկաւակով և մէկ մաս կտաւատի եղով՝ գեղեցիկ առաձգական հերձաքար կը շինուի։

Ե. Մէկ մաս թղթի զանգուածով, կէս մաս սոսինձով, իրեք մաս ճերմակ հայկաւակով, մէկ մաս բրտի կաւով և մէկ ու կէս մաս կտաւատի եղով՝ շատ գեղեցիկ գծաքար կը շինուի, առջի չորս կերպով շինուածէն ալ վեր. և ինչ որ վրան գծուի՝ կը պահէ, և թէ որ քանի մը տրամ Պրոսոչայի կապուտով ներկուելու ըլլայ՝ կապուտագոյն կանանչ գոյն մը կ'առնու։

1 Հաւան։ 2 Թօփմաք։

1 Մէ-ոքսէնկ։